

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**Ք. Եղեգնաձոր**

**18.03.2016թ.**

Սույն թվականի մարտի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի այս տարվա առաջին նիստը:

**Նիստին ներկա էին՝**

**Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անդամներ՝**

Հարություն Սարգսյան-նախագահ, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ Վարդան Ավագյան-Եղեգնաձորի փոխքաղաքապետ

Հասմիկ Սարգսյան-ՀԵՀ Վայոց ձորի մարզային կենտրոնի համակարգող

Անուշավան Մովսիսյան -Վայոց ձորի տարածաշրջանային պետ. քոլեջի դասախոս

Արթուր Սմբատյան-Վայքի փոխքաղաքապետ

Գոհար Թաղևոսյանը- Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

**ՕՐԱԿԱՐԳ**

**Նիստում քննարկվող հարցեր**

1. Մարզային զբաղվածության կենտրոնների տնօրենների հաղորդումը երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց պետական ծրագրերում ներառելու և զբաղվածության խնդիրների ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

*Ձեկուցողներ՝ Եղեգնաձորի և Վայքի զբաղվածության կենտրոնների տնօրեններ  
(Շ. Սահակյան, Ս. Մնացականյան)*

2. Վայոց Ձորի մարզում գործող հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրների, տարվող աշխատանքների, առկա խոչընդոտների, դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

*ՀԿ նախագահներ՝ Խ. Մարկոսյան, Ս. Խաչատրյան, Կ. Մովսիսյան*

3. ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> և <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթների նախապատրաստական աշխատանքների մասին:

*Ձեկուցող՝ Ս. Հովհաննիսյան*

4. Կատարված աշխատանքների արդյունքներով սահմանված (տարվա 10 լավագույն անվանակարգեր) նոմինացիաների ոլորտների, չափորոշիչների և գնահատման համակարգի քննարկման մասին:

*Զեկուցող՝ Ա. Հովհաննիսյան*

5. Հայաստանում երիտասարդների ներգրավվածության խթանման ծրագրի ընթացիկ աշխատանքների կատարման մասին հաղորդում:

*Զեկուցող՝ Հ. Մարգարյան*

### **ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ**

1. Երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց պետական ծրագրերում ներառելու և զբաղվածության խնդիրների ուղղությամբ տարվող աշխատանքներ: Հաշմանդամություն ունեցող երիտասարդներին աշխատանքի տեղավորելու դժվարությունները և հնարավորությունները:
2. Վայոց Ձորի մարզում գործող հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները, տարվող աշխատանքները, առկա խոչընդոտները, դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները:
3. ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> և <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթների նախապատրաստական աշխատանքները: Մարզի տարբեր համայնքների երիտասարդ ընտանիքների մասնակցության ապահովումը:
4. Տարվա 10 լավագույն անվանակարգերի/ նոմինացիաների ոլորտները: Եղան բազմաթիվ առաջարկություններ անվանագարգերի ընրտության հարցում:
5. Հայաստանում երիտասարդների ներգրավվածության խթանման ծրագրի ընթացիկ աշխատանքները, ձեռքբերումները, ծրագրի ընթացքում առաջացած խոչընդոտներն ու դժվարությունները:

### **ՈՐՈՇՎԵՑ՝**

1. Կազմակերպել ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> և <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթները բարձր մակարդակով՝ ներգրավվելով մարզի բոլոր համայնքներին և երիտասարդներին:
2. Ընտրել 10 անվանակարգեր, որոնք խթան կհանդիսանան մշակույթի, սոցիալական, կրթության և այլ ոլորտներում տարբեր կառույցների ավելի ակտիվ գործունեության համար:

3. Ընդլայնել ՀԿ սեկտորի համագործակցության շրջանակները: Համագործակցություն հաստատել Զբաղվածության կենտրոնների հետ՝ երիտասարդ մասնագետների վերապատրաստման և զբաղվածության խնդիրների լուծման նպատակով:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆ